



ՍԵՐԵԿԱ

Pilsener Beer



ՇԱՐԱՐԱՐԵՐՈ

ԱԶԳԱՅԻՆ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԱՔԱԿԱՆ

337 ՏԱՐԻ
1903

ԹԻՒ 23 ՅՈՒՆԻՍՐԴ

ԽՄԱԳԻՐ-ՏԵՕՐԵՆ

Մ. ՄԱՏՈՒՐԵԱՆ ՈՐԴԻ

ԻԶՄԻՐ

M. M. KASSALIAN 213 Smyrna

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Բաժակահամ մը	529
ԿԱՐՕ	Նախն Հեաշը (<i>բանաս.</i>)	532
Ս. ԴԱԻԹԵԱՆ	Թ. Թէրզեան (<i>գրկն. ուսումն.</i>)	532
Լ. ՇԱԹՐԵԱՆ	Սիպիլի Հարցեան Պատասխան	536
ՆՈՒՐՀԱՆ	» » »	537
ԹՈՌՆԻԿ – ԱՂԶԱՐ	» » »	539
Կ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ	» » »	540
Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ	» » »	540
ԸՆԹԵՐՅՈՂ	» » »	541
ԼՈՒՍԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ	Քննադատականի մ'աւծիւ	541
ԽՄԲ.	Մոլիերի Հայ Թարգմանութիւնը	544
Մ. ԱՍԱՏՈՒՐ	Պատուելիին Աղջիկը	546
Յ. ԱԼՓԻՍՐ	Ժամադրութիւնը	548
	Լրացալ	552

ԲԱՅՈՒԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՍՈՒԽԵՐԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ԷԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆԷ

Մոլիերի աշխարհահայտի կատակերգութեանց Հայերէն թարգմանութիւնն, որ մեր գրականութեան մէկ չքնադ գոհարը պիտի բլլայ, յանձնուած է աղագրութեան :

Բաժանորդագրուիլ փափարցալը, որոնց անամենքն հեազհեալ պիտի հրատարակուին Ա. Մամուլոյ մէջ, կրնան զիմեկ հետեւեալ հասցէներուն .

ԻԶՄԻՐ — Տխարի Սիւննիեան Եղբարի (Մեծ Վեդիք խան)

«Ա. Մամուլ» ի Խնկասքրասումը

Գին բաժանորդագրութեան՝ Երուսիոյ համար **1/2 Օսմ. ոսկի**
 Արսասունեանի » **11,50 ֆրանկ**
 Թուսասանի » **4 րպչ 50 կ.**



ԹԻ Ի 23

3 ՅՈՒՆԻՍ 1903

ԲԱԺԱԿԱՃԱՌ ՄԸ*

ՏՈՒՆԸ, որտ ալ եւ ալ յարկերն այցեցինք թիչ յառաջ, Ամեն Ս. Պատրիարք Հօր հառաբան կրօնական չնորճազեղ թափօրին բնկերակից, մարդկային կեանքի ակտուր կողմը կը ներկայացնէ: — Հոն են հէք հիւանդները, որոս կը տառապեցնէ իրենց մարմնայն ներքին կամ արտաքին վէրքը, անկողնայն դամուած, անզօր ու սղեւստ, ղերեկները հարած ու նախանձազին աչքերով նայելով լոյսին որ հոն գուրք կենսափայլ կը ժպտի, ու կը հօտի երկինքէն վար առատալարք լոյսին, անասունին, բարի եւ չար արարածներուն վրայ, ու զիշերնկն յաճախ, տենդէն այրած, քրտինքէն թաց, ցաւէն տանջուած, գուրկ լուսնէն զօր « կեանքի կենաց ճաշին մէջ ամենէն անդարար կերակուրը » կոչեց Շէքսպիր, կ'անցունէ՝ ստառապալից ժամերու ծանր չղթան քաշելու անձկութեան մէջ: — Հոն են մանուանոց այն հիւանդները, որք ազքատ են նաեւ, գուրկ իրենցներուն քով ինքզինքնին զարմանել տալու նիւթական կարողութեւ:

* Այն ձառն է այն զոր Պերպլեանն Ռեթկու Էֆ. այնրան յագմունքաւ և զժարձարձ շեշտով մը խոսած է Ազգ. Հիւանդանոցի մէջ 71 Էք տարեկարծի սեղանին վրայ և զոր մեծ հանդերձ կ'որոտարտակենք տարակոյս չունենալով որ մեր բնմերցոյք ևս նոյնրան համեմեանք պիտի կորզան մեծամեծն գրագէտին այս գեղեցիկ նատուածը՝ համակ տողորուած գունի, եղբայրաիրաձեան և մարդտիրաձեան զգացումներով: Ծ. Խ.

նէն, եւ որք նաեւ յաճախ անտէր անօգնական, չունին զիրենք դարմանող ազգական կամ բարեկամ ձեռքեր: — Հո՛ն են այն միւս օխտացեալներն ալ, գուցէ — ապահովապէ՛ս — աւելի արգահատելիները, ջղազարները, Յիմարանցի դժբախտ հիւրերը, որք ուժ ունին եւ երբեմն իսկ տարօրինակ ուժ մը, դժբախտաբար, բայց որք տկարներուն տկարներն են, վասն զի կորուսած են մտքի ուժն ու անոր առողջութեան յատկանիշ պայծառութիւնն ու հաւասարակչութիւնը, լոյսի սուղ ու սակաւ բուզէներէ դուրս՝ յարատեւ բանդագուշանքի մը մասնուած, իրենք իրենցմէ օտարացած, բարոյական կեանքի ղեկը իրենց ձեռքէն վրիպած, բարոյական անձնաւորութեան դրոշմը՝ անձնական պատասխանատուութիւնը մերկացած. . . : Հո՛ն են նաեւ. զժբախտներ կեանքի երկու ներճակ ծայրերուն մէջ չուսութեամբ իրարու մօտեցած, անարշտպան ձերուհիներ ու որբացած մանուկներ, առաջինները, կեանքի սխուր վերջալուսի մը մէջ, երբեմնի հայրեր մեծ մասամբ, որոց կը պակսին դաւակներ որք բնական նեցուկները պարտէին ըլլալ իրենց բեկեալ հասակին ու ալեւոր տարիքին, ու միւսները, միգապատ արշալուսով մ'աչքերնին բացած կեանքի, մատաղ դաւակներ որք կ'որուսած են իրենց ծնողքը երկրային նախահնամութիւնները որոց ա՛յնքան պէտք ունի մանկութեան ազկազկ հասակը՝ — Ու այս ամէն գոհերը չուսութեան երկու սեռէ էակներ, ու ամէն հասակներէ, միացած այս յարկի ստի, ըրած են զայն համայնապատկեր հանդիսարան մը մարմնական, հոգեկան եւ ընկերական տկարութեանց, ցաւոց ու փառից՝ Գերազանցապէս արամազգեցիկ տխրաշունչ է անոր տեսիլը:

Բայց նաեւ այս տունը մի այլ բան կ'արտայայտէ որ մարդկային բնութեան ու ընկերականութեան մի ազնիւ կողմն է, ու, իբր այն, սխտիւն է ու ուրախացուցիչ է: Այս տունը կը նշանակէ նաեւ գութի ձեռնտու օգնութիւն, եղբայրսիրութիւն, մարդասիրութիւն. ամէն կրօնքներու ու ամէն բարոյականներու, ապա եւ քրիստոնէական ոգւոյն պատուիրած սիրոյ պարտականութեան գործնական տեսիլը կը պարզէ, լինելով այն, մի եւ նոյն ատեն, լա՛յն՝ գոգ մը մալրագութի՛ բացուած թշուառութեան առջեւ, լա՛յն ապաստանարան մը կրկնադուր բացուած, ուր մարմնոյ հիւանդն ու մտքի հիւանդը, անտիրական անկեալ ձերը ու անտիրական լքեալ մանուկը եկած են ու կրնան զալ խնդրելու եւ գտնելու զեզ ու զարման իրենց տկարութիւններուն, մտունդ մարմնոյ եւ հոգւոյ, պատասպարութիւն զատա կամ ձիզմ հասակի, — վայելելով զայնս ընդհանրապէս անխիտարէն ու անձնուիրաբար առատաձեռնուած: — Ու գոհերն այս Տան զիտեն բացուիլ նաեւ կեանքին, լոյսին, ընկերակցանութեան, երջանկութեան զարձնելու կամ ընծայելու համար հիւանդը՝ որ հոս ձգած է իր ցաւերը, ջլախտաւորը՝ որ հոս գտած է իր կորուսած մտքի ղեկը՝ ծնողազուրկ ու բախտազուրկ մանուկը, որ հասակով ու խելքով

զարգացած, ուսում ու արհեստ սովորած, ա՛լ կրնայ բաւել ինքզին-
քին, կարո՛ղ է կերտողն ըլլալ իր բախտին:

Մխիթարուած ու կաղզուրուած ուրեմն դուրս կ'ելնենք այս
Տունէն, մեր այցելութենէն շինիչ յոյս մ' ու հաւատ մ' առած մարդ-
կային ճակատագրի անբախտութեանց մէջ մեր պայքարներուն հա-
մար: — Դժբախտութիւնը, աւա՛ղ, անբաժան է ամենուրեք մարդ-
կային ճակատագրէն. բայց նախախնամութիւնը զթոյ կու սիրոյ
զգացումներով հակակշիռ մը դրած է անոր ու մեր մէջ, ու թեկադրած
է մեզ անոր՝ իր այլազան երեւոյթներուն տակ՝ ընկերային իրերա-
խնամ դարմանումը, դարմանման միջոցներուն զարգացման հետա-
մուտ բարեսէր ու այլասէր ճիւղը, մարդկային հնարքներու սահմա-
նին մէջ, անդարմանելոյն ալ զա՛յն տալով զարձեւալ ամօքիչ բա-
լասան, իբր սրտացուցիչ, զի պատսպարանի սրահներուն մէջ ծածա-
նող սրտազուլթ սիրոյ մթնոլորտը, չըջապատումը սիրով ժպտուն
ու ախրած գէմբերուն որք կը թուին ըսել տառապելոյն թէ կը ցա-
ւին որ իրենց սէրը չի կրնար հնարաւոր ընել անհնարը, զէթ, վէրքը
պատող փափուկ բամպակին պէս, ըստ կարի պիտի մեղմէ ցարը, ու
քաջութիւն տայ զիմագրաւելու անդարմանելոյն արհաւիրքը:

Գո՛ւթ, սէ՛ր, ընկերսիրութի՛ւն, մարդասիրութի՛ւն, ահա՛ դասը
զոր կը ներշնչէ մեզ այս Տունը, դասը զոր կ'առանանք մենք կամ
կը զօրացնենք կը սերտենք ի մեզ մեր այցելութեամբ, — այլ նաեւ
երախտագիրտութի՛ւն առ համայն անցեալ եւ արդի բարերարս այս
Տան, սկսելով իր առատաբաշխ պարզեօքն ու թանկագին հովանա-
ւորութեամբն այս Հաստատութեան առաջին բարերարն հանդիսա-
ցող նորին Կայսերական Վեհափառութենէն եւ իր Օգոստափառ
նախորդներէն որք անոր անցելոյն բարերարեցին, ու անցնելով
Պէղձեանէն, Տատեաններէն, Կիւլպէնկեաններէն, Միքայէլեանէն,
Կիւմրչիկէրտաններէն, Փարակէօզեաններէն, մինչև այսօրեայ անձ-
նուէր կնամակալներն ու վերջին համեստափայլ բարերարուհին՝
Տիկի՛ն Շիշմանեանը, որ իր 2000 ռոսիւոյ կալուածի ու արժէթուղթի
նուէրը դեռ երէկ բերաւ լսին յանձնելու Պատ. Հոգարանձութեան
բազմերախտ Ատենապետին ձեռքը:

Կ'առաջարկեմ ըմպել այս բախակը իբրեւ արտայայտութիւն մեր
երախտապարտ մաշկմալից զգացմանց, ընկերացեալ ջերմ իղձով մը
բարեւաւութեան՝ բոլոր պատսպարելոց հասցէին:

ՆԱԻԻՆ ՀԵՏՔԸ

Մերամաղձօրէն ձեռքս ծնօտիս,
 Կանուրջին վրայ նստած սուսնձին,
 Տարտամ հոգերով գեղուն ներսիդիս՝
 Ուր բեր բաղձանքներն իմ կ'այեկոծին,
 Կը դիտեմ նաւին ընծացքը տենդոտ՝
 Դրօժի խաղաղիկ լանջօին վրայէն,
 Զոր ջերմ տարփանքով մեղմ, անուշահոտ
 Հո իերն իրիկուան՝ լուս կը փայփայեն:
 Ու ջինջ մաքրութեան թոյլ ցոլերուն մէջ՝
 Երկու կապոյտներն իրար կը դիտեն.
 Այնպիկի վերթ մը. — հուրի նըրբամէջ
 Շեշտ վար կը նայի վրի կապոյտէն:
 Նաւը կը ճեղքէ ջուրերը կապոյտ
 Սէգ ու պանծալի գընացով խաղաղ,
 Ինչպէս կարապ մը պչրոտ ու անփոյժ՝
 Կուրծքը լըճակին, — սնդուս միսպտղալ:
 Փրփուրէ ժանեակ կապոյտի լանջին՝
 Նաւին ըսն հետը կ'երկարի հեռուն,
 Մընչու հոն՝ ուրտեղ իրար կը հպին
 Լոյծ ջրմներն երկու ջինջ անհուններուն:

1900.

ԿԱՐՈ

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ*

(ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

Իր ուսանողութեան շրջանին խանդոտ երեսակայտիկեանը կը պարտինք ուրիշ շերթուած մը, որ մեր հասարակական գեղեցիկ գոծարներէն ըլլալէ զատ, շատերու բերնին մէջ մեղանոյշ եղանակի մը վրայ կը լսուի: ԻՄ ԿԵԱՆՔԻ ԽՈՐԱՊԵՐՈՎ այդ սողերուն մէջ, ուր շքեղ պատկեր մը շրջանակուած է, կը զգացուի խորունկ վիշտը որ կը կեղեքէ սիրաը մտազաշ պատանեկին որ Նօսրայժիկ անձուկներով կը մտմտի: Այդ կարօտակէզ սրտէն թոչտղ ակուր վանդիւնը ամէն պանդուխտի հատաչքն է:

* Տես Ա. Մանուկ քիշ 22, երես 509:

Յ՛ր պիտի գայ որ այս կենաց
 Բեռն ուսերէս թօժափելով
 Պիտի ննջեմ հետ սիրելեաց
 Որոց հալիմ ես կարօտով:
 Ա՛ն գերեզման այն տեղ ըլլար
 Ուր Վռափորի գարեանդներ՝
 Ծաղկապըսակ ու միշտ գալար՝
 Թանան յալիս գիրենց պատկեր:

Եւ այն ճուշի ճուշի պեակր
 Գային փշրել շիրմիս վրայ
 Ու հոն նոճեաց մէջէն կամէր
 Ճերմակ մանկին լոյսն արծամեաց:
 Եւ թէ ապիտակ պատանրներով
 Նըստէր հողիս յեզր տեղ շիրմին,
 Լըսէր հեռուանց դանդաղ թիով
 Ծովաշրջիկ գերզ ձըկնորսին:

**Թէրզեան այս քերթուածը կ'աւարտէ ամենէն սրտաւոյցդ, ամե-
 նէն մեղամաղձոս սողերով, դոր երբէք արտադրած ըլլայ, եւ կը
 նկարագրէ նժգեհէին լքուած վիճակը:**

Նոր մարդկութիւն մը՝ նորայոյս
 Նոր նոր արշունք կամ ժըպիտներ
 Անկարեկիրք իմ ցաւերուս՝
 Շիրմիս նաշուածք մ'իսկ չեն նետեր:

Այլ անտիտիտ ըզրեզ միայն
 Պիտի գանձեմ, ո՛վ մեծ բնութիւն,
 Եւ յայն անդունդ մոռացու թեան
 Պիտի ժգախս ինձ միայն դուն:

*

1891 Մարտ 3, **Կերտէի գիշեր տեղի կուռնենար տարեկանն պա-
 րանանդէսը:** Այն զգլխիչ եռուզեոին մէջ, պարերու եւ երաժշտու-
 թեան անուշ յուզումներուն տակ, **Թէրզեան կը դրէ, օթեակի մը
 անկիւնէն — հառանականարար գեղանի օրիորդի մը պարաստարէն
 կախուած սիրուն մատրտով — հետեւեալ ՊԱՐՆ, « ասի յախոյ յօրին-
 եալն:**

Երիներանց թիժունց
 Քան գնոյլ հողմատիւս
 Քան գծարմ ծողկունս
 Չոր կըրբ գեփիւս:
 Ի թեւ օդային
 Իանդախտ նուագաց՝
 Չոյց կը սըլանան
 Կոյսը հետ պատանեաց:
 Արբեցնող բուրմունք
 Լուսածղի ազջիանց,
 Հոտանք լոյսերու
 Ըտըր հրատենչ աչաց:
 Եւ քրքիք գաղկայք,
 Մրմունք ունկն ի վար,
 Կը փոխեն ըզարանն
 Յերազոց աշխարհ:
 Դիմակին քոյով
 Պան մ'ազատուցրամ՝
 Թողու գանձն աղջիկ
 Իր սըրտին գեղմանց:
 Պարակցին ի թե
 Թոյլ յե՛տու զգլխիկ,
 Ետին գերզ վարսամ
 Ծըփան խոպոպիք:

Ոտքն երկրէն կըտրած
 Սիրան ի մունդ երագ,
 Ծըճեկով լըզցնորս
 Ուռուցիկ ոնգամբք:
 Անյայտ սրտանշտ
 Չայնա յօղեն շրժունք,
 Մարին դէմ փաղիլին
 Երկինք հրաշալոյսք:
 Դարձի՛ր սիրոյդ
 Այլ յորձանաց մէջ
 Ո՛վ կոյս մոռնալով
 Ըզփազուն փայլիչ:
 Դարձի՛ր ըզմայլմամբ,
 Դառնան տաղերն ալ
 Դառնան եղանակը
 Այլ ի յաջ տուեալ:
 Բազդին անխեն ալ
 Արագ կը դառնայ
 Ժըպիտն արաստաց
 Ետեւէն կուգայ:
 Այլ ո՛վ — ցաւ փաղիին
 Եւ բու մանկութեան
 Թօժափած հրապոյրք
 Չե՛ն դառնար միայն . . .

*

Կեանքին հեքոտ յորձանքը ասկէ աւելի կուռ ու ամփոփ, բայց նաև աւելի ցաւագին պատրանքներ առթող սողներով ուրուազրել կարելի՞ էր . . . :

Իր նախընծայ երկերն են (1871) Տաղի Անակրեոնի (հելլեն բնագրէն հայերէն գրաբարի վերածուած), Ողիւսիադա, պատմ. թատերանուագ (= օբէրա) չորս արարուածով, Սաւորիս, որ Արեւելեան թատրոնի մէջ ներկայացուած է, և այլն: Ուլիսկապոյի՝ բնագրին Իտալերէն տաղաչափուած է, երաժշտութեամբ Տիգրան Չուխաճեանի: Գրքոյկը որ Քիրիչճեան տպագրութեամբ լոյս տեսած է, Վսեմ. Յակոբ պէյ Պալեանի ձօնուած է՝ Ուղերձով մը. — ո՛չ այն սղերձներէն որոնք նուաստ ու նկուն գիրք մը կուտան ստորագրողին:

*

Ուրիչ ձօն մ'ալ կուղղէ Տիկին Սրբունի Տիւաարին, իբրև Ստե. նապետի Դպրոցասէր — Հայունկաց որոնց կը նուիրէ իր Ֆաուստ թատրերգութիւնը, նմանութեամբ Կէթէի, « Գերմանիոյ մեծ քերթողին հրաշալի ստեղծագործութեան մէկ աղօտ մանրանկարը: »

Կեանքը սիրցնելու, Սէբն ու Գինին երգելու սահմանուած ամէն նէն աղուար մէկ գրուազը կը դնէ Ֆաուստի բերնին մէջ, ուղղուած իր տարփաւորին՝ Ուլիսկապոյի.

Լի՛ց այդ բաժակն, ո՛վ կոյս մատաղ,
Լից եւ խրմեհ խնդե՛նամ.
Բայց դո՛ւ՝ խրմէ՛ նախ, բու շըրժու՛նքդ
Առնեն գրածակ քաղցրահամ:
Խմէ՛ անվախ մեզ լոկ վըկայ
Նարընջե՛նիքն են ծաղկած,
Եւ ջինջ վըտակն որ զըլտորի
Զգատկերդ ի ծոցն իւր պահած:
Երգէ՛, ո՛վ կոյս, նոր կըկոցեալ
Վարդեկոկոն շըրժու՛նքդ
Ինչպէս զեփիւռ յայրած ծաղիկ
Սրախս իջնեն՝ բու երգերդ:
Առ նախանձու լըռին սոխակբ,
Եւ աստեղաց անդր ի ծոց՝
Քեզ թևաքօղ ունկն կախեն
Հոյլք ըզմայլած զըւարժնոց:
Մ'ամըջնար, մի՛. ո՛վ կոյս, երգէ՛,
Ո՛չ այլ լըսի ի բնածեան՝
Բայց լոկ վարդեր որ կը բացուին
Ու ոգոյդ արօփիւնք սիրական:
Բայց, ո՛ն, ինայէ՛ ինձ . . . ո՛ն, զըժս,
Բոքողէ՛ դէմքդ երկնային . . .
Թէ ինքն՝ Աստուած՝ տեսնը ըզմեզ
Կը նախանձէր մեր բաղդին:

Մէկդի ձըգէ բողո, ո՛վ սղջիկ,
Թող ինձ յետու ծոցիդ վրայ,
Այս տերեւոց կամարին ասկ՝
Մեզ լոկ լուսինն է վըկայ:
Ո՛ն, մի՛ գողար, լոկ մի համբոյր
Այդ Ֆալտուսը սգիտակ:
Եւ գիրկընդիտուն առնեն տանին
Բզմեզ կե՛նացս այս կոնակք:
Ո՛ն, մի՛ դողար, վըկայ են մեզ
Լոկ մանիշակք ու յամիկք
Որ, գերդ սիրոյ երգ, կոյս, յեժեր՝
Բուրմունս հեղուն անուշիկ:
Հոգոյս հատար, մտեցո՛ւր այտդ
Իմ այտերու կամոցին
Թոյլ տուր թևերս ըլլան գօտի
Այդ նազելի բո մէջքին:
Թող սրտերնիս իրարախառն
Գըզուին սիրոյ երազք.
Ամէն բարիք դիւրանց են, կո՛յս,
Յաւերժական՝ սէ՛րն է լոկ:

՝ Այս օբերայի նախերգանքը (ouverture) ձանձ է երաժշտականերու:

*

լեզուի անհարթութիւններով հանդերձ, նուազ հասկնալի՝ նուազ շքեղ ու սրտազրատ. չեն այս ատղերը սրտնց նման՝ նորերը չեն արտազրեր՝ ինչո՞ւ, չեմ գիտեր: Եւ յետոյ, Թէրզեան՝ ձեռն աւելի ուրիշ կը պաշտէ, փօռնէն աւելի փօռը կը խնամէ. թողունք որ իր պատկանած գրական գալըցին համար ու այն թուականին հա հար ուր կը գրէր, այս ատղերը ա խարհարար կրնային սնայուիլ, անդ անդ սպրդած այդ լեզուական շրտակները մարմանդին մէջ սրտուած ծաղիկներու. չե՞ն նմանիր, եւ աւելի կուս ու կորովի չե՞ն ընկր՝ գրուածքը:

1861–1870 թատերական նորածագ շրջաններուն՝ Ս. Հէքթեանի հետ Թէրզեան կարեւոր մասնակցութիւն մ'ունեցած է թատերախաղեր յորինելու. եւ թարգմանելու. գործին ինչպէս պիտի սեանենք Թրֆախայ րասրոնի պատմութեան մեջ:

Իր սպուած երկերուն շարքը ստուար չէ, բայց այդ քիչերը գեղեցիկ նմոյշներ են իր անժխտելի առողանդին՝ իրբեւ բանաստեղծ իրբեւ լեզուագէտ, իրբեւ ուսուցիչ եւ իրբեւ մասնագիր: Չեապիւր վիճակի մէջ է մանտանդ՝ որ կը մնայ իր քերթուածներու. հոծ ու աւելի հասուն մտքը կը մաղթենք որ իր մահէն առաջ անոնց ամբողջութիւնը լոյս տեսնէ, ա՛յ աւելի պիտի գնահատէ գինք՝ նոր սերունդը:

Ըսինք արդէն, գերազանցապէս գեղեցկագէտ քերթողն է Թէրզեան մեր մէջ, սրուն փափուկ ու նաղելի ոճը՝ Պէշիքիաշեանի քով կրնանք գտնել, եւ ապիտ՝ իրենց մշակած խաւարիան լեզուին եւ իրենց՝ ժամանակ մը ապրած գեղեցիկ երկրին՝ Խաւարիոյ ազդեցութեամբ անշուշտ:

Թէրզեան գրագէտ մը չէ եղած այն անձուկ խմատով գոր կուտանք մեր կարգ մը գրողներուն. իրեն համար՝ լեզուի կանոններ, գրական օրէնքներու. կոյր հետեւողութիւն խոտելի թաւած են միշտ յանդի ձօխութիւն չէ որ կը փնտէ, բայց փոխարէն՝ գեղեցիկ ուրիշ ու ընտրած նութը ներդաշնակ ու կուս կերպով արտայայտելու գաղանիքն ունի կանոններու. մէջ չկաշկանդուելը՝ մահդերձ, շատ բնական ոճ մը, հրապուրիչ արտայայտութիւն մը ունին իր գաղափարներն ու զգացումները սրտնք միշտ ապիտ. ու պարկեշտ եղած են, ինչպէս ըսինք:

Իրբեւ լեզուագէտ ալ մեր մէջ Թէրզեան իր մասնատոր անդնունի վերը ըսինք թէ Անակրեոնը հելլեն բնագրէն թարգմանուած է, թէ Ողիւնպիսարան խաւերէն տաղաչափուած է. Գաուս եւ Ասպրա (Կարմէն Սիլվայի) ֆրանսերէնէ թարգմանուած են Աւելյոնէք թէ երեսուն տարի կայ որ կալաթա Սէրայի լիկէնին մէջ ֆրանսերէնի ուսուցիչ է, եւ գիտենք թէ ինչպիսի հրապոյր մը կը գնէ իր

դաստանդութեանց մէջ, սերունդներ անցած են իր դասընթացքներէն, եւ իր սաները անուշ յիշատակ մը, պատկառանք մը միշտ կը տածեն Թէրզեանի անձին նկատմամբ, թէ՛ իրբեւ ազնիւ ու քաղաքավար նկարագրի տէր անձի մը եւ թէ՛ իրբեւ արդիւնաւոր ուսուցչի որ զիտցած է իր հոգիի խանդէն ու մտքին լոյսէն բան մը աւելցնել ուսանողներուն խնայականութեան վրայ: Հայերէ՞նը Աւելորդ է բոլր թէ ի՞նչ խոր հմտութիւն մթերած է մայրենի լեզուին մէջ, որուն ձօն գանձերը պրպտած է խնամով, Մեծ Վարպետներու տիտան — հայագէտներու խնամքին տակ՝ ոչ միայն հայերէնագէտ այլ իրբեւ փորձառու մանկավարժ, գիտէ իր այս նախասիրած ճիւղը սիրելի ընծայելուն զաղտնիքը, ինչպէս կրնան վիպիկ Կեղրոնականի նախկին ռուսանողները: Լատիներէնը, Թուրքերէնն ու՛ կարծեմ Անգլիերէնն ալ հաշուելով՝ Թէրզեան կը գրէ, կ'երգէ, կը սագաչափէ, կը խօսի եւ կը մատենագրէ վեց — եօթը լեզուներով:

Իրբեւ ուսուցիչ է մանաւանդ որ այս հոյակապ գէմքը ծանօթ է մեր նոր սերունդին, համեստ աշխատաւորի մը երեւոյթին տակ, որ երեւան կուգայ իր խօսուածքին ու վարմունքին մէջ: Օժտուած տաղանդի մը առջեւ զանուիլը շուտ կը զգաս երբ իր անուշ ժպտով աչուըններ վրադ յառած՝ ներդաշնակ ձայնովը եւ անըստգիւտ մաքրութեամբ խօսած լեզուովը ճառէ ո՛ր եւ է նիւթի վրայ, եւ որքան ալ ցամաք ու անհրապոյր ըլլայ նիւթը, ինք գիտէ իր նուրբ ձաչակին ու հասուն դատողութեան շնորհիւ, հաճելի ասուլիսի մը փոխել:

Ճարինները թեթեւ խորշումներ միայն զծած են իր գէմքին վրայ, որ, սակայն, իր սրտին պէս թարմ ու զուարթ է միշտ՝ որքան զգայուն ու շնորհալի հոգիի մը պսպղուն հայելին: Իր հոգեզմայլ քերթուածները կարգալ եւ անոնցմով ներշնչուել, տպաւորուել ու տպորուիլ՝ երէց եղբօր մը յանձնարարութիւնս է նոր սերունդին:

Դատը - Քէօյ

ՍՄՄԱՍ ԴԱԻԹԵԱՆ

ՍԻՊԻԼԻ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Պատասխանը, զոր պիտի տամ այնքան ճարտարօրէն հիւսուած ու մտածուած այս հարցուովին, զոր մէջտեղ նետեց Սիպիլը մէկն է անոնցմէ որոնք դուրս պիտի հանեն, անկեղծօրէն խօսելով, ամբողջ եսասէր բնաւորութիւնը — առնականութեան յատուկ, բնածիր բնաւորութիւն — հոգիիս ու միեւնոյն ատեն ալ ամէն ինձի նման սպրոդ, սէր մերձեցումի մէկ սկզբնաւորութիւնը ըմբռնող երիտասարդներու, որ մեծամասնութիւնը կը կազմէ մեր երիտասարդու-

Թեան որ փաղափի կեանքովը կ'արի: Հետեւաբար՝ այն որ իմ կինս
պիտի ըլլայ օրին մէկը, պիտի ուզեմ որ

Ա. Ըլլայ նախ՝ զգացող եակ, բառին է՛ն մեծ ու էն լայն առու-
մովը:

Բ. Ունենայ միջակ ուսմունքի պաշար մը, դիտնայ աղուոր տնա-
բարութիւն:

Գ. Ազջիկ եղած ստեղծ, ապրած ըլլայ, պարկեշտ հօր մը ու մօր
մը թեւին տակ, հետու երկոյթներէ, հետու ընկերութիւններէ, հոգ
չէ քիչ մըն ալ վայրենի բնաւորութեամբ, բայց միեւնոյն ատեն բա-
լի, առաջին անգամ աչքը բացուելուն զիս տեսնող եւ էրիկ մարդ
միայն ինծի ըմբռնող եւ ինձմով ու իմ մէջս միայն ապրող:

Չպիտի ուշէի երբէք — նոյն իսկ կինս ամբողջ հոգիս ու ժողը
սիրելուս համար — որ անիկա առանց ինծի բարեկամներ ընդունէր,
զարգացած երեսնալու, փայլելու ապուշ տենջով ամենէ՛ն տարօրի-
նակ վիճակներուն ենթարկէր ինքզինքը եւ ո՞վ դիտէ, թերեւս ալ
օր մը խարուելով վրայ տար իր պատիւն ալ:

Իսկ պիտի վնասէի ամբողջ կիներուն վրայ

Նախ՝ համակերպիչ զիսնաչ, ակնածիլ իր ամուսինէն, մեծագոյն
պայմանը երջանկութեան:

Ըստ իս, վա՛յ այն մարդուն որ մօրուքը իր կնիկանը ձեռքը կու-
տայ, եթէ նոյն իսկ այդ կինն ալ աշխարհիս կիներուն ամենէն բա-
լին ու պարկեշտը ըլլայ: Ամուսնութիւնը, ինծի համար, համակեր-
պութիւն մըն է, համակերպութիւն պատուաւորութեան եւ բամ-
բասուելու վախէն ծնած:

Երկրորդ՝ պիտի փնտռէի կուրծքի լեցունութիւն, փառաւոր
մարմին մը.

Երրորդ՝ բարբառող չըլլայ կարելի եղածին չափ, ասոր կամ
անոր ետեւէն եւ մանաւանդ կի՛ն ըլլալ, femme de plaisir ամենէ՛ն
առաջ, միայն մէկու մը, իր էրկանը համար սակայն լոկ:

ԼԵՒՈՆ ՇԱԹՅԱՆ

Բաւական այլայլութիւն պատճառեցին Սիպիլի ու զգած հարցում-
ներն թէ գեղեցիկ եւ թէ մեր սեռին վրայ:

Հա՞րկ է արդեօք ըսել թէ անպզտոր ակնոցներով դատելու կա-
րողութիւն մ'անհրաժեշտ կ'համարեմ անաշարիւռած հարցմանց պա-
տախտանելու համար: Թէ ինչ աստիճան պիտի յաջողիմ այս մասին,
կ'ի՞րողում վճռել ընթերցողներուս եւ համակրելի գրադիտուհիին:

Ինչո՞ւ համար երեք ձիւրք, ոչ աւելի ոչ պակաս: Այնպէս կ'կար-
ծեմ, թէ ներկայ ժամանակիս մէջ այնքան հաշուադէպ դարձած է
գոյութիւնը լաւ ձիւրքերով օժտուած արարածներու, որ եթէ խոր-
հրդաւ որ այդ երեք թիւերու քանակութեամբ ձիւրքեր ունեցողներ

զանուէին, անհունապէս դոճացում դոճած պիտի ըլլայինք ամենքս:

Հետեւապէս առանց չեղելու այդ երեքի կանոնէն, յանդգնութիւն չպիտի համարէք եթէ ըսեմ թէ գեղեցիկ կին մ'ունենալէ պիտի խորշէի եւ նախադաս պիտի համարէի սիրուէնէ աւելի հաւնակրելի չքնազ էակ մը, խոհանոցի հոտերէն աւելի սիրող իր դիւրջը, ձեռագործը ու կարգապահութիւնը: Գալով երկրորդ ձիրքին՝ չզրտեմ ինչպէս որոշել զայն՝ լոկ բառ մը գործածելով կ'վստնամ որ չպիտի յաջողիմ արտայայտել բուն իսկ սահմանել վախաբան, այսինքն պիտի գոհ մնայի եթէ հաւնակրպոյ ու համեստ ըլլար: Թող ներուի ինձ քիչ մ'աւելի ընդարձակուիլ, համակերպող ըսելով կ'ըմբռնեմ ընտանեկան, ընկերական, անհասական կեանքի ամեն ելեւէջներուն յարմարող համեստ՝ բառին իսկական նշանակութեամբ, լրակաց, ուշիմ, թէ լսելու եւ թէ չլսելու վարձ, տեսնելու եւ երբեմն անտես աննելու չափ խելացի կոյր վստահութիւն ունենայ վրաս, այսինքն սէր եւ երբէք չըլլայ նախանձոս, այս վերջինէն՝ զոր իբր պիտի մը կ'նկատեմ՝ սրտսիկ կ'խորշիմ, եւ անկէ կրճուելէ կ'ստակամ որքան կուզեն թող մեր հոգեխօսներն նախանձը սիրոյ հետ գուզընթաց համարին, ս եւ է կերպով անհանդուրժելի նկատած եմ ու կ'նկատեմ զայն: Գալով երրորդ ձիրքին՝ պիտի ըսեմ առողջութիւն, եթէ երբէք ատողջութիւնն ձիրք մը կրնայ նկատուիլ բաց ներկայ կեանքի պայմաններուն մէջ այնքան ատողջութեան բացայայտ կերպով վնաս բերող ձիրքեր կան որ պիտի յանդգնիմ անոր այդ անուշը ապուս, սրովհետեւ սէր, համեստութիւն, համերաշխութիւն, գեղեցիկութիւն, մինչեւ իսկ հարստութիւն եթէ գրուին նժարին մէկ կողմ, երբէք չեմ կրնար փոխարինել զանոնք ատողջութեան հետ, մանաւանդ որ այդ ամենն վայելելու սկզբնական ու էական պայմանը կ'զուանիմ ատողջութիւնը:

Իսկ թէ ինչպէս կուզէի որ ըլլային սահասարակ բոլոր կիներն, ահա հոս խնդիրը կ'ճիւղաւորի:

Շորէնհարբի պէս չեմ ասեր զանոնք, իսկ Միրազօի պէս ալ անոնց դրկին մէջ մեռնելու սկզբունքէն մղմաներով հետո կ'զանուիմ, հետեւապէս ամեն կիները պիտի ուզէի որ գեղեցիկ ըլլային, սա համողումն ունենալով որ գեղեցիկ կ'ողջ համար միջին ճամբայ չկայ, կամ բարի կ'ըլլայ կամ չար եւ երկու պարագային ալ ուսումնասիրուելու առատ նիւթեր կրնայ մատակարարել: Եթէ չար է՝ անոր լեզուի ու սրտի խորշերէն դուրս ժայթքող թոյներու երազները կարելի պիտի ըլլար ուսումնասիրել, իսկ եթէ բարի է՝ անոր բարութեան ու բարեմտութեան աստիճանին վրայ հիմնալ:

Այս պատճառ մը չէ սակայն որ ամեն կիներու համար պահանջկոտ չըլլամ որ զիտակցութիւն ունենան իրենց պատուին զոր կ'նշական կուտումն առաջին անյեղլի պայմանը կ'ընդունին:

Այս ամենու հետ պիտի ուզէի որ անպատճառ խելացի ըլլա-

յին մեր կենները: Խելացի կին մը ինչ վիճակի ու աստիճանի մէջ ալ գտնուի, որքան ալ չփացած, որքան ալ բարձրացած եւ ընդհակառակն որքան ալ բարոյապէս ինկած ու փճացած նկատուի, երբ խելացի է, այնպէս կ'կարծեմ թէ կրնայ առաջին պարագային ինքզինքին տէրն ըլլալ եւ երկրորդ պարագային ինքզինք աշխատել եւ իր հաւասարակչիս զիրքը գտնել ընկերական աստիճաններուն վրայ:

*

Ահա համառօտ պատասխանս եղած հարցումներուն: Ուրախ եմ որ Սիպիլ առիթը ներկայեց անդրապառնալու պահ մը մեր իրական սեռի վրայ, որու անբռնարարելի գոյութեան եւ իրաւասութեան սահմանն երբեմն միմոսական չգիտեմ ինչ անմտութեամբ մը կեղծելու կ'փորձուին ոմանք զբազան հրապարակին վրայ: Ծպտումի նորածեւ այլ ձախող խանդ մը՝ որ ուղղակի կ'ապացուցանէ թէ գրական հորիզոնին վրայ փայլող քանի մը ցանցատ այլ իրական արժանիքներու հետ վերաբերուելու որքան անգիտակ ենք եւ հետու մարդավարութեան ու պաշտօնութեան սահմաններուն մէջ մտալու ամենաէական քաղաքավարութենէն:

ՆՈՒՐԱՅ



Ահա թէ մասնաւորաբար ի՞նչ բաներ պիտի պահանջէի իմ իտէալ ամուսինէս:

Առաջին որ անիկայ զիս սիրէր բոլորանուէր սիրով մը, որպէս զի նախ ապրէր ինծի համար:

Երկրորդ որ, ըլլար ծիր՝ մեղուի պէս, այնչափ որ մինչեւ անգամ իր հանգիստը գիտնար գտնել աշխատութեան մէջ:

Երրորդ որ, ունենար իր ամուսնական կոչումին գիտակցութիւնը, որով պիտի գիտնար վայելել այն սրտապարար հաճոյքները եւ զգալ այն միակ փառքը, որոնք կին-ամուսինի վերապահում են՝ տունը փոքր զբախտի մը վերածելուն մէջ:

Իսկ ինչ որ կը ցանկայի տեսնել մեր ամբողջ զեղեցիկ սեռին, ինչպէս նաեւ յաւելաբար իտէալ կնոջս վրայ ալ, ասոնք են.

Լա՛ւ գիտնան իրենց մայրենի լեզուն, ի՞նչ որ գիտնան նաեւ այն լեզուներն ալ զորս կը թելագրեն սորվիլ իրենց փափաքը կամ միջոցները, քմահաճոյքը կամ փառասիրութիւնը:

Ունենան կիրթ ճաշակ մը, զոր գիտնան ու աշխատին ցուցադրել այն ամէն բաներու վրայ՝ որոնց կը հալին իրենց մասները:

Սիրեն պարզութիւնը, որ ճաշակին համերաշխութեամբը, պիտի ջնջէր կենդանու մտքէն արդուզարշական այն պահանջկոտութիւնը որ այնքան մեծ զեր կուսենայ յաճախ էրիկ մարդոց ելումուտի հաշիւներուն կազացումին մէջ:

Վերջապէս քիչ մ'ալ վեհանձն ըլլան, որպէս զի չլիջանին հա-
ճոյք զդալ կարգ մ'անշահ բամբասանքներ լիութելու մէջ:

Քէնդըրը

ՅՈՒՆԻԿ - ԱՂԶԱՐ

Յարգելի Տիկին

Պիտի բաղձայի որ կինս նախ գեղեցիկ ըլլար, հրապուրիչ գե-
ղեցիութիւն մ'ունենար որուն տեսքը սոմէ'ն ատեն թիկ - թաք ընել
տար սրտիս:

Երկրորդ պիտի պահանջէի որ պարկեշտ ըլլար ան, եթէ պար-
կեշտ մարդ մը Աստուծոյ է'ն մեծ մէկ գործն է, չիմ պիտի պար-
կեշտ կինը Աստուծոյ ի'նչ տեսակ մէկ գործը պէտք կըլլայ նկատել:

Երրորդ՝ կատարելապէս սիրէր իս, իր հոգիին ամբողջ զօրու-
թիւնովը, համակերպէր պարտզաներուն առանց զժկամակելու, ու
հրա ես տխրէ'ի ինքը լար:

Ահա ասո'նք, յարգելի տիկին, պիտի ուզէի որ ունենար կինս ու
ասո'նք պիտի սիրէի տեսնել ուրիշ կիներս'ւ ալ վրայ: Անկեղծօրէն:

Սըվազ

Կ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Պատասխանելէ առաջ սաղանդաւոր զրազխուհիին հարցման՝
դիտել կուտամ թէ ամուսնացած մարդոցմէն քիչերը միայն՝ պիտի
ուզէին ճշյիւ պատասխանել հարցումին առաջին մասին, այն գե-
րազանց պատճառով՝ որ պիտի հարկադրուին, այլ թէ կին, իրենց
կեանքի ընկերոջ թերի կողմերը ցուցադրել հանրութեան, ինչ որ
իհարկէ ունի իր խոշորիկէ անպատեհութիւնները:

Ես կը փափաքէի, 1. որ իմ կինս մտաւորապէս զարգացած ը-
լար ինձ չսփ, ո'չ աւելի, ո'չ պակաս, 2. իրերն ու անձերը կարող
ըլլար դիտել ա'յն հայեցակէտներով՝ զոր ունիմ ես, 3. զո՞ն պիտի
ըլլայի եթէ քիչ մ'աւելի համբերատար ոգի ցոյց տար ընտանեկան
ընթացիկ գործերու մէջ:

Կ'ուզէի տեսնել ամէն կնոջ վրայ՝ 1. առաքելութիւն եւ հա-
մետութիւն անձնաւորուած, 2. անտեսադիտութիւն եւ զաւակ
կրթելու փութաշնորհութիւն, 3. ջերմապէս կը փափաքէի որ ամէն
կին նորոյթներէն՝ թէ արդուգարդի եւ թէ սովորութեանց տեսա-
կէտով՝ միայն պատշաճը, չափաւորը եւ պարագայականը որդեգրէր
եւ զանոնք ի գործ զնէր ոչ թէ լսկ տունէն դուրս ուրիշներու հա-
ճիլի երեւոյալու համար, այլ իր սան մէջ՝ ամուսնոյն եւ զաւակաց
համար:

Մինք այս յայտնութիւններով օժտուած կը փափաքինք տեսնել
ամէն հայ կին, յատկաթիւններ՝ զոր պէտք է եւ կրնան ունենալ
եւ բոլորովին աւելորդ կը զանոնք զեղեցիկութեամբ, հանձարով եւ
խմացականութեամբ նշանաւոր օտարազգի կամ հայ կիներն ներկա-

յայնել իբր տիպար — օրինակ, որոնք, այո՛, կրնան պաշտուիլ բայց չեն կրնար ընդհանուր պայման համարուիլ:

Տրտպիզոն

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Սիպիլի հարցման իբր պատասխան, շատ մարդ շատ մը բաներ կրնան ճառել, ճաշակի ու կարծիքի խնդիր. իսկ իմ կարծիքս հետեւեալն է: Կին մը պէտք է ըլլայ՝

Ա. Վեհանձն:

Բ. Զգայուն:

Գ. Սրամիտ:

Վեհանձնութիւն, զգայնութիւն եւ սրամտութիւն, այս երեք մայր յատկութիւններով օժտուած կինը հրեշտակ մ է, պաշտուելու արժանի, մանաւանդ կին մը պէտք է ըլլայ ներշնչող, ու երբ է, ինչե՛ր կրնայ ընել:

Գալով ուրիշ ամեն կնոջ, ես կ'կարծեմ թէ՛ անոնց վրայ տարբեր յատկութիւններ տեսնել ուղելու պատճառ մը չունինք, ինչ որ մեր կնոջ վրայ տեսնել կ'փափաքինք, կ'վայլէ նաև. ամեն կնոջ: Բայց նախ մենք մեզնէ պահանջենք հաշիւը, յետոյ մեր կիներէն:

Հովկ

ԸՆԹԵՐՅՈՂ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆԻ Մ'ԱՌԹԻԻ

Գ. ՊՈՒՊԼԻԻ

Կարդացի ձեռ քննադատականը Մաւրաի 21 թիւին մէջ, եւ ցաւեցայ որ լաւ չէք հասկցած զիս. կ'երեւի թէ չեմ կրցած միտքս լաւ բացատրել, ուստի պիտի ջանամ դո՛ւհացնել ձեզ, աւելի որոշ խօսելով:

Ըսի թէ կինը սխալելու աւելի հակամէտ է քան այրը, որովհետեւ կնոջ սիրտն է որ կը կառավարէ զինք եւ աւելի շատ զղացումներն են որ կ'իշխեն իր վրայ. իր միտքը, իր դատողութիւնը զղացմանց թեւալրութեան սակն են միշտ, հետեւապէս զարմանալի չէ՛ եթէ իր քայլերն ալ չեղին շատ անգամ ուղիղ ճամբայէն Շեղիլ ըսելով սակայն մի՛ կարծէք որ ամուսնական պարտաւորութեանց չեղումը ըսել կ'ուզեմ միայն: Կինը ունի ուրիշ պարտականութիւններ եւս հանդէպ իր զաւակներուն, իր բարեկամաց եւ իր նմաններուն, եւ որոնց անթի՛րի կատարումը կը պահանջէ մտքի գերակշռութիւն մը, բոլորովին անկախ ծայրայեղ զգացմանց ազդեցութենէն:

Կը կրկնեմ թէ հիմէնեան երանութիւնը յարատեւ ընելու համար զրամբ աջակցութիւնը անհրաժեշտ է, եւ այն այրը որ գործունեայ եւ զբամ շահելու կարող չէ՛ չկրնար բարեբաղդ ընել իր ընտանիքը:

Գործունեայ ըսի եւ ոչ հարուստ, հետեւապէս հարստութիւնը չէ որ կ'ուզեմ մասնանիչ ընել եւ գովել, այլ զայն յառաջ բերող գործունէութեան ողին: Արդ, գործունէութիւն ըսելով ես չեմ խմանար միայն մարդուն աշխատութեան եւ՞ իր գոյութիւնը պահպանելու ձգտող եռանդը: աշխատութիւնը բնական օրէնք մ'է՛ որուն կը հը պատակի ամեն մարդ, եւ աշխատասիրութիւնը արժանիք մը չէ այլ պարտաւորութիւն մը: Այն գործունէութեան ոգին զոր տեսնել կ'ուզէի ամեն այրերու վրայ՝ միաւորումն է Ֆիլիքրական ու մտաւորական կարողութեանց, կամքն ու փափաքն է յառաջանալու, զարգանալու եւ բարձրանալու հասարակ մարդոց սովորական մակարդակէն: Ճշմարիտ յարգանքի եւ ընդհանուր համակրութեան արժանի է լո՛կ այն մարդը որ մի միայն իր անհատական ձեռներէցութեան, կուրովին եւ անվճար կամքին ու խելքին չհորհիւ՛ ընկերական սանդուխին աստիճաններէն կը բարձրանայ մէկի՛լ մէկիկ, կը տիրանայ հարստութեան պատուաւորապէս եւ օգտակար անդամ մը կը լինի հանրութեան:

Այստեղ չեմ ուզեր ծանրանալ այն բեւբաւոր բարեքններուն վրայ՝ զորս զբամը միայն կրնայ ստեղծել եւ վայելել տալ, չեմ ուզեր ի վեր հանել անոր կրթիչ, ազնուացուցիչ եւ բարոյացուցիչ դերը՝ արդի քաղաքակիրթ աշխարհի մէջ, բացայայտ է որ յառաջդիմութեան ղէկը անշարժութեան պիտի դատապարտուի՝ եթէ օրին մէկը զբամը զապրի յանկարծ մատակարարելէ հարկ եղած ոչմը՝

Ինչ որ կ'ուզեմ ըսիլ այն է թէ՛ զբամը ամուսնական կեանքի բարեխառութեան անհրաժեշտ պայմաններէն մին է, սէրը չի բաւեր միայն կեանքը անուշ եւ անգորբ ընելու համար: Կ'ընդունիմ եւ կատարելապէս համամիտ եմ ձեզի թէ չկայ հարստութիւն մը որ կարող ըլլայ տալու մե՛լ՝ փոխադարձ սիրոյ երանութիւնը եւ պարտաւորութեանց խղճի մտօք կատարման գոհունակութիւնը, բայց այդ երանութիւնը կարճատեւ է, այդ գոհունակութիւնը վաղանցիկ է երբ աշքատութիւնը եւ անոր ետեւէն վաղուան ապրուստի հոգը մտմտութք, հիւանդութիւնը եւ անոր զիմադրելու զժուարտութիւնը մի առ մի կը մտնեն մեր դռնէն ներս:

Արթէ կին մը կրնա՞յ հանդիստ եւ զո՞ն ըլլալ՝ երբ իր զաւակը մեծցած է ու կ'ուզէ դպրոց գրկել զայն եւ կամ դպրոցէն ետք բարձրագոյն ուսումնարան մը, երբ կը տեսնէ որ սղան բնածին ընդունակութիւն եւ սէր ունի մասնաւոր գեղարուեստական ճիւղի մը հետեւելու համար եւ այդ ամենէն կը զրկէ զայն պարզապէս զբամի չգոյութեան բախելով, ըսէք, կա՞յ միթէ՛ այդ խեղճ մօր վիճակէն աւելի ակուր եւ արգահատելի վիճակ մը, եւ միթէ՛ ամուսնոյն գորովալի եւ անձնուէր սէրը կարս՞ղ է ջնջելու կնոջ ճակատէն սեւ ու թախճազին մտածումներու հետքերը, կը տարակուսիմ:

Արթէ կրնա՞յ չստառապիլ կինը՝ երբ իր զաւակը հիւսնդ է, թո՞

քախտէ կը հիւժի, բժիշկը օգտախոսութիւն, լաւ ու կանոնաւոր
 սնունդ կը պատահիրէ, առանց մայածելու թէ այդ միջոցին մօրը
 սրտէն արիւն կը հոսի եւ գլխահակ կը խորհի որ այդ ամենը ընելու
 համար միջոցները կը պահպին: Իրաւ է որ դրամը անբուժելի հի-
 ւանդութիւններ բժշկելու հրաշքը չկրնար գործել, եւ այդ պարա-
 դային հիւանդին ցաւերը եւ հոգեվարքը երկարելէ ուրիշ բան չընէր,
 բայց հիւանդին յայտ կըրտայ, մօրը սիրտը կը հանգստացնէ եւ անոր
 վերաւոր սրտին վրայ չի թափեր այն կրակը թէ « գուցէ զաւակս
 առողջանար եթէ պէտք եղած զարմանը լինէր »: Այդ կրակը կը հա-
 լեցնէ մօր մը սիրտը մինչեւ իր կեանքին վերջին օրերը, սիրոյ բա-
 նաստեղծութիւնը հրապօրը չունի այլ եւս նէրա համար եւ ոչ ալ
 կեանքը քաղցրութիւն:

Արդ, դուք կ'ըսէք թէ ընտանիքի մէջ տիրող գլխաւոր շահը՝
 մանկան շահն է եւ գլխաւոր երջանկութիւնը մանկան երջանկու-
 թիւնն է, հետեւագէտ եթէ այդ ու կին կրնան երջանիկ ըլլալ նոյն
 իսկ մի միջոց սիրով, մանկան շահը կը պահանջէ որ անոնք անգի-
 տան, իրենց սիրոյ երանութիւնը վայելելէ աւելի՝ մտածեն թէ ինչ
 կերպով ինչ միջոցներով պիտի կրնան աւելի շուտ եւ աւելի շատ
 դրամ շահիլ յօգուտ իրենց զաւակաց եւ անոնց սպաղային ապահո-
 վութեան:

Տղաքը կրթիկ չի բաւեր միայն, պէտք է անոնց սպազան մտա-
 ծել՝ որ եւ է արհեստի կամ գեղարուեստի մը համար պատրաստե-
 լով զանոնք, աղջկանց ընտանեկան կրթութիւնը եւ բնական ձիր-
 քերը արժէք չունին միշտ, աւա՛ղ երբ դրամօթիտ չկայ եւ ասիկայ
 հաստատելու համար ազայոյցներն չեն որ կը պահպին զժրագոյրարը:

Ըսի թէ այրը որքան խելացի, աշխոյժ ու գեղողէմ ըլլայ, որ-
 քան սիրէ ու պաշտէ կինը, գործեալ նէ զժրագոյ կ'ըզայ ինքզինքը
 երբ իր սնու սինը աղքատ է եւ չկրնար գոհացնել իր փափաքները:
 Այս ըսելով չեմ ուզեր բնաւ յայտնել թէ ճշմարիտ երանութիւնը
 հարստութեան մէջ փնտուել պէտք է, թէ ամուսնոյն միւս բարի
 յատկութիւններն կարեւորութիւն չունին, ո՛չ, Սիպիլի հարցման
 երեք յատկութիւն նշանակած էի սրտասիրտանի մէջ եւ անոնք
 կ'ամբողջացնեն զիրար. ըսել կ'ուզեմ թէ ամուսնական երջանկու-
 թիւնը որքան անկարելի է առանց սիրոյ, այնքան անկարելի է ա-
 ռանց գրտմի: Երկուքն ալ սերտիւ կապուած են իրարու հետ եւ
 բաժնու մը փոխադարձ մշտապ կ'ըլլայ միայն: Արդ, հարստութիւնը
 սահման չունի եւ ընկերական դասակարգերն անթուելի են, միոյն
 նարուստ կարծած վիճակը կրնայ ուրիշի մը համեմատ եւ կամ շատ
 աղքատ վիճակ մը երեսիլ: Կ'ուզեմ չեչտել սակաջն որ մարդս ման-
 կութենէն ինչ կեանքի որ փարժուած է՝ կ'ըզձայ գէթ այդ կեանքը
 շարունակել, եթէ չկարենայ զայն բարեւաւել: Այն աղջիկը որ հօ-
 բնական տանը մէջ սովորած է բարեկեցիկ կեանք մը վարելու, վա-

յելած է բարօրութեան եւ հանդատուէտ կեանքին անուշութիւնները, չկրնար երբէք մշտապէս երջանիկ ըլլալ իր ամուսնոյն հետ դժուար պայմաններու մէջ ապրելով:

Կը հարցնէք թէ երբ աղջիկ մը հարուստ մարդու մը հետ կ'ամուսնանայ եւ ամուսնութենէն ժամանակ մը յետոյ ձախող պարագաներու բերմամբ այդ հարստութիւնը կը կորսուի, ամեն բան կը լմննա՞յ միթէ: Ո՛չ, ահա՛ այդ պարագային մէջն է որ այրը ամենէն աւելի պէտք ունի այն յողմիլ չղիացող գործունէութեան ոգիին՝ սրով դիմուած պիտի կուռի անդադար ձախողութեան հարուածներէն կարելի եղածին չափ խուսափելու համար: Կո՞չ առաքինութիւնը, քաջալերող եւ սիրտիչ դերը, իր անուշ, համակերպող եւ անձուէր բնաւորութիւնը զոր ունենալ պէտք է միշտ եւ աւելի շատ այդ պարագային, մեծ օղուս մը չեն կրնար ունենալ սակայն՝ եթէ այրը գործունեայ չէ ու չկրնար վերականգնել եւ վերաշինել ինչ որ բաղդը փլցուցած է:

Քաղաքակրթութիւնը յատաշարիմութեան սիրահար ըրած է արդի կիները եւ օրիորդները, նրբացուցած է անոնց գեղեցկին ճաշակը, ազնուացուցած է անոնց միտքն եւ զգացումները, ամեն բանին լաւը կը ճանչնան եւ լաւագոյնին կը բաղձան, կ'ուզեն վայելել կեանքի բարիքները, կը փափաքին օգտակար զեր մը կատարել երկրի վրայ եւ գաւակներ ունենալէ վերջ՝ երջանիկ ընել զանոնք: Հետեւապէս այնպէս կը կարծեմ թէ իրենց ամուսնոյն վրայ պիտի փնտռեն ոչ թէ հարստութիւն՝ այլ այն կարողութիւնը որ զայն կ'ստեղծէ եւ յաղթական կ'ընէ այրը՝ կեանքի պայքարին մէջ:

ԼՈՒՍԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՍՈՒԷՐԻ ԶԱՅ ԹԱՐԳՍԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրական անակնկալ յայտնութիւն մը ըրած չպիտի ըլլանք պահովաբար, երբ ըսենք թէ Լաֆոնթէնի այնքան յաջող թարգմանութենէն յետոյ՝ Մոլիէրի — այս աշխարհահռչակ կատակերգակ — բանաստեղծին — գործերուն ամբողջական թարգմանութիւնն է որ կուզայ ի մօտոյ ճոխացնել հայ դրականութիւնը, նոր բարդ մը եւ հաճելի պէսպիսութիւն մը աւելցնելով ամոր միօրինակ եւ անհրապոյր մի՞երքին վրայ: Յայտնի է արդէն զրասէր ազգայնոց որ մեր քաղաքակից եւ հանրամասնութ զրադէտ — թարգմանիչ Մեծ. Մեսրոպ էֆ. Նուպարեան՝ հայերէնի վերածած է Մոլիէրի ամբողջ կատակերգութիւնները, որոնց հրատարակման համար մօտաւորապէս երկու տարի առաջ քաղաքիս մէջ կազմուեցաւ Մասնախումբ մը հետեւեալ անձերէն. Տիարք Թոսրով Եփրեմ, Մեսրոպ Սիմոնեան

Յակոբ Վէմեան, որ յատուկ շրջաբերականով հրաւիրեց գրականութեան բարեկամ ազգայինները՝ մասնակցելու յիշեալ գործին սպա-
գրութեան համար բացուած բաժանորդագրութեան: Ուրախ ենք
յայտնելու որ ապարդիւն չէ մնացած այս հրաւերը, որմէ քաջակեր-
ուած հրատարակման Յանձնախումբը՝ որոշած է անմիջապէս մտնոյ
յանձնել կատակերգութեանց ձեռագիրներէն տասներկուքը, որոնք
Գրաքննութենէն արդէն վաւերացուած են, սպասելով որ մնացած-
ներուն ալ վաւերացումը հասնի:

Աւելորդ է հոս չեղտել այս ձեռնարկին կարեւորութիւնը եւ
գովեսան ընել տիեզերահռչակ կատակերգակին երկասիրութեանց
սաչափ միայն ըսենք թէ Մոլիէր այն եղական դէմքերէն է որոնք
արտակարգ հանձարի մը ուժով՝ իրենց սալրած ժամանակին ու ի-
րենց ցեղին բարքերուն ու մոլութիւններուն խորթափանց ու-
սումնասիրութեամբ՝ միանգամայն ամէն ժամանակներու եւ ամէն
ցեղերու բարքերն ու ընկերական — ընտանեկան յուսթիւններն կը
պատկերացնեն ու կ'իտացնեն, զստնք ձաղկելու իրենց եղանակին
մէջ գնելով նուրբ ծաղրանքի եւ հեղնութեան այնպիսի երանգ մը
որ թէ՛ կ'իտայթէ եւ թէ՛ կ'չինէ, թէ՛ կ'վայրացնէ եւ թէ՛ կ'համո-
զէ: Եւ որ ո՛չ կ'հիննայ եւ ո՛չ բան մը կ'կորսնցունէ իր այժմէու-
թենէն:

Անվրէպ այս գեղեցիկ յատկութիւններուն համար է որ աշխար-
հի առաջին կատակերգակ բանաստեղծին գործերը թարգմանուած
են ամէն լեզուներու եւ ամէն սեռի, ամէն հասակի եւ ամէն իմա-
ցականութեանց հպելի եղած՝ իրենց հրահանգիչ եւ զուարճալի հան-
գամանքով: Բաց աստի թատերական աշխարհին մէջ միշտ եւ ամեն
քննադատներու միաբերան վկայութեամբ գերիվեր ճանչցուած է
Մոլիէրի հեղինակութիւնը զոր չէ թէ գերազանցող այլ անոր հա-
ւասարող իսկ չէ գտնուած որ եւ է քաղաքակիրթ ազգի գրականու-
թեան մէջ:

Եւ հայ գրականութիւնը պէտք չէր որ զրկուած մնար այդ զար-
դէն: անա այս պէտքն է զոր կուգայ լեցնել Նուպարեան էֆէնտի
որու թարգմանչի անվիճելի կարողութիւնը եւ ձեռնհասութիւնը
ամէն սարակոյսէ վեր է եւ թարգմանութեան յաջողութեան յայտ-
նաբարբառ գրաւականը:

Գալով հրատարակման Յանձնախումբին գովեստի եւ շնորհակա-
լութեան արժանի են անոր աշխուսողամետրն որ անձեռնիրարար
վուրի կանգնելով այսպիսի գրական գեղեցիկ ձեռնարկի մը եւ
գնահատելով անոր կարեւորութիւնը՝ ամէն գովելի ձիգ ի գործ
կ'գնեն անոր ընդ փոյթ հրատարակման համար եւ այսպէս ուղղակի
քաջալեր եւ սատար կ'հանդիսանան հայ գրականութեան բարգա-
ւաճման:

ՊԱՏՈՒԵԼԻՒՆ ԱՂՋԻԿԸ

« Escargots de Bourgogne,
treize à la douzaine . . . »

Ա

Միջնաքաղաքի փոքրիկ դռնէն 82 քայլ հեռու, ընդարձակ գետնի մը վրայ, երկյարկանի կը բարձրանար Յիսուսեանց եկեղեցին, բնակարանը եւ աղայոց վարժարանը:

Աղջկանցը Մայրապետանոցի մաս կը կազմէր. Մայրապետանոցը, այս սրբազան վայրը կոչու հոգիներու . . . աւելի նորածեւ շէնքերով զարդարուած, կը գտնուէր Frèresներու վանիկն մէկուկէս սասնեակ քայլ հեռու, գէպի Արեւելակողմ:

Frèresներու վանքի դրան կից, մշտահոս աղբիւրի ջրով կ'օտոգուէին ընդարձակ բակին մէջ աճող բարոխներն եւ ուռենիներն:

Հինգ frèresներ Մեծաւոր Հայր Պէնուարի հակողութեան սակի եւ օգնական մի քանի հայ ուսուցիչներով կը կառավարէին 300 աշակերտներ, աղբափ՛ դասակ, կծծիներու՝ լաճ, եկեղեցւոյն սրբոզող ընտանիքներու՝ լակոս:

Տասնեւերեք Քոյրերու յանձնուած էր աղջկանց վարժարանի 120 մասաղաններու հոգը. — որոնց հայերէնը կը դասախօսէր քոյր — Մարգրիտը, պատուելիին աղջիկը . . . :

Բ

Համակրելի գէմք մըն է պատուելի Մարտիրոսը, հիմա՛ Մօսիկօ Մաքրիւռոս: Ասկէ տասը տարի առաջ դասախօսած է հայ վարժարաններու մէջ, եւ ամսականի անկանոն վճարմանց եւ մտնաւանդ անտեղի նուազման մը պատճառաւ զէն ըրած, եկած նետուած էր frèresներու գիրկը:

Պատուելին իրաւունք ունէր. — Մեր դպրոցի հոգաբարձութիւնը յաճախ պատուելիին իրաւունքները չյարգելու անխղճութիւնը ունեցած էր, tant pis . . . :

Հինգ աղջիկներու հայր. — մէկ ու կէս սակի կուսալին մեր վարժարաններու մէջ, լիբան ալ հարիւր դրոշէն, ինչպէս սովոր են հոս վճարել:

Յիսուսեանք կրկին թոչակ առաջարկեցին, երեք լիբա օսի. — նաեւ խոստացան սասնճնել իր աղջիկներու կրթութեան, ուսման եւ ապագայի հոգիը . . . :

Գ

Պատուելիի աղջիկներէն անդրանիկը, Օր. Մարգրիտ, 19 տարեկան հասակին . . . ուխտեց կրօնաւորուհի ըլլալ, եւ նուիրուիլ աղ-

Ղիկներու գաստիարակութեան:

Տարեքով Մայրապետներու էն կրտսերն էր, երեխասներորդը, իսկ գեղեցկութիւնովը՝ աննման, տեսքովը՝ չքնաղ, վայելչութիւնովը առաջինն էր, եւ Superior ի աչքին լոյսը . . . :

Պ.

Աստուածածնայ օրը, չորեքշաբթի առտու, Մայրապետանոցի դրան քով կախուած գանուեցաւ ընկեցիկ մանուկ մը, գարդարուն զամբիւղի մը մէջ. — ձմեռ էր, Յունվարի ամսուն մէջ:

Կէս գիշերին, վերին յայտնութիւնով մը քոյր Սէրաֆին անկողնէն ելաւ, մութին մէջէն ստուերի պէս սահելով գնաց բացաւ երկաթեայ հաստ դուռը, եւ խաչակնքելով ներս առաւ ցուրտէն ճըռուցող սիրունիկ ընկեցիկը: Անմեղ մանկիկը Յունվարի ձաղկող ցուրտէն ստուելու վրայ էր, պատէն վար կախուած saule pleureur ի թարթափ ճիւղերը ձիւնի միացած կաթիլները կը թոթուէին մերթ ընդ մերթ զամբիւղին մէջ, քանի հովը զանոք շարժէր լերկ ու մերկ:

Առաւօտուն, կանուխկեկ, մեծ ուրախութեան պատճառ եղաւ այս նորանշան գէպքը բոլոր կաթողիկ երկիւղած հոգիներուն . . . :

Եկեղեցիին մէջ կատարուած այս ցնծաութիւն հանդէսէն բացակայ էր քոյր Մարգրիտ, անհանդատութեանը պատճառաւ: Թանջք ունէր, սաստիկ խիթ մը գամած էր զինքը անկողին երկու օրէ ի վեր, ու կը գալարէր մարտիրոսօրէն:

Մասնաւոր աղօթք կատարուեցաւ պատարագէն վերջ, superior ը յիշեցուց իրենց այս ընդհանրական հաւաքումին շարժաութիւն՝ մանկան երկնազդեցիկ զիւտը . . . :

«Աղօթենք, ըսաւ, ամենքնիս միասին, ծունր դրած Մարիամ Աստուածածնի պատկերին առջև, խնդրենք Միածնէն, որ իր սիրելի անուշիկ մօր բարեխօսութիւնով հոս ներկայ եղող քոյրերու մէջէն ընտրէ՛ սանտու մայր մը, այս անմայր սպեկին . . . :»

Այս միջոցին ներս բերին քոյր Մարգրիտը, իր անկողնոյն մէջ պլլուած, խառնելու համար իր աղօթքը՝ ներկաներու հայցուածքին:

Superieur ը շարունակեց. — «Ամենակարողն Աստուած, ինչպէս կարելի ըրաւ Յիսուսի մանկան ծնունդը եւ կոյս Մարիամէն, նոյն պէս ալ թող հաճի կար չնորհել ներկայ աղօթատէր քոյրերէ մէկուն . . . սանանց:»

Լոին եւ երկարատեւ աղօթքէ մը վերջ, յայտնուեցաւ որ քոյր Մարգրիտ այդ ընտրեալ ստնտու մայրն է . . . չնորհք Տեառն . . . ի վերայ Մարգրիտի:

Յովհաննէս մանուկը, հրաշքով պողպատ ստինքը ծծեց քոյր Մարգրիտին, եւ աճեցաւ Աստուծոյ չնորհօք . . . :

Ժ Ա Մ Ա Դ Ի Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը

(ՆՈՐԱՎԷՊԻ ՊԷՍ ԲԱՆ ՄԸ)

Թատրոնէն վերագարձնուն, երկու բարեկամներ՝ Երուանդ Սիրունիկեանն եւ Արչակ Տօտիկեանն, զոյգ մը ապրողներ (viveurs), Բըթի-Շանի փողոցը սրճարանի մը մայթին վրայ եկած էին ծխել՝ իրենց սովորական նարկիլէն: Լապրունաի խումբը, այդ գիշեր, կտոր կտոր ըրած էր Ballo in Maschera ն եւ գրեթէ մեռցուցած էր անմահ վարպետին այդ ազուր օրէրանս Մեր երկու բարեկամները ներկայացման վրայ խել մը լեղի քըննադատութիւններ ընելնէն ետքը, հանդիսակամներու մէջ գանուղ իրենց ծանօթ կիներուն վրայ շաղակրատած էին անվերապահ խոհականութեամբ մը եւ յանգած էին հոն ուր կը յանգին ամեն կենցաղատէր երիտասարդներ երբ կէս գիշերէն ետքը գլուխ գլխի տուած, կը խօսակցին՝ պատկելու ժամը կարելի եղածին չափ ուշացնելու համար: Սիրային արկածներու փոխադարձ խօստովանութիւն մըն էր որ տեղի կուսենար հիմայ այդ երկուքին միջեւ, խօստովանութիւն մը ուր գողտրիկ մեղքերը իրարու կը յաջորդեն առանց որ եւ է արձակուրդի սպասելու:

— Ես aventure մը ունեցած եմ, սկսաւ պատմել Երուանդ, որ երբէք մտքէս չելլար:

— Սա արագին կնկան պատմութիւնը, անգամ մը պատմած ես, գիտեմ:

— Ան չէ ասիկայ եւ չեմ կարծեր որ ուրիշ անգամ լսած ըլլաս:

— Եթէ նոր բան է, ըսէ մտիկ կ'ընեմ վրայ բերաւ. Արչակ, փութորիկ մը գնելով նարկիլէին յատակը:

Աթոռ պատին կոթնցուց Երուանդ եւ մէկ ոտքը միւսին վրայ նետելով սկսաւ իր պատմութեան:

— Ասկէ երեք տարի առաջ առտու մը, Օրթագեղի նաւամատոյցին վրայ շողենաւին դալտտան կ'սպասէի վար իջնալու համար: Յանկարծ սրճարանին ետեւէն կանացի փէշէլու քըտուըտութիւն չըջինը ականջիս կը զարնէ եւ ետիս կը զահում եկողը զիտելու համար: Աչք խածնող կին մըն էր եկողը ծանր եւ ճաշակաւոր սրգոյզարդի մը մէջ: Իր հովանոցին տակէն դէմքը չի կրցայ լաւ մը տեսնել, բայց եթէ դատել հարկ ըլլար գինքը իր մարմնոյն մնացած մասերէն, այդ փէշերուն տիրուհին մանկամարդ կին մը ըլլալու էր ապահովապէս: Տրամէլա — Բոնրատուրի բարկ բուրում մը անմիջապէս կոահել տուաւ. ինձի թէ նորեկը Օրթագեղի տափակ աշխարհին չէր պատկաներ: Աւելի հաստատ ըլլալու համար կնթաղութեանս մէջ, աչք մը կը նետեմ ոտքերուն՝ սրոնց chausserie կարելի է ճըլզգրիս գաղափար մը կազմել անձանօթ կնկան մը վրայ: Նրբակերտ

զոյգ մը կէս — վերնի եւ կէս — ուլեմարթէ պօթեր խիտ ճաշակաւոր կերպով կը գրկէին անձանօթիւս տափկները որոնք պղտիկ էին եւ բարեձեւ: Այդ պատուանգանին վրայ կառուցուած մարմին մը սովորական, գոհերի կնիսն մը չէր կրնար ըլլալ: Եւ տեսայ որ խաբուած չէի երբ արիկներ հովանոցը դոցեց շուքնաւ մանկու համար: Բայց այդ գլուխը, Աստուած իմ եւ տեղ մը տեսած էի այդ թիփը անձանօթ չէր ինծի, ս՞րբ ե՞րբ: Այդ աղւոր կնիկը առաջին անգամը չէ որ տեսած էի եւ եթէ չեմ սխալիր, խոսած ալ էի հետը: Բայց ասկէ անդին յիշպատ թիւնս առաջ չեքթար եւ ի դուր կը կոսնեմ ուղեդս լոյս ցառակեցնելու համար անկէ: Գործ չտնիս նէ փնտակ, մէկ կերպով չկրցայ ասկէն ելլել:

Շողկնաւոր կը փակչի նաւամատոյցին եւ կապանեմ որ ան խնձմէ առաջ անցնի:

Հանդրեճում տեսնելու էիր, Երուանդ խեղքը կը կորսնցնէլը: Կանթակին մօտենալուն պէս՝ մարդուած, սերտուած շարժումով մը ձախ ձեւքովը աղէկ մը վեր կաննէ փէշը, թող տալով որ տեսնես սեւ թափանցիկ դուլաներու մէջ բանաարկուած զոյգ մը սրունքներ որ սրկապանեմ կերպով կը բարձրանան մինչեւ ծնրակապէն մտտ մը վար: Աւելցար ասոր վրայ heliotrope ասնթիւրաբարք ժլւրանի մը հետքը եւ բերնիդ ջրերը սրբէ:

Համալումս նամալում էր, այս կինը Օրթագեղի ապրանք չէր: Ձեւ ըսեր թէ ասանկ սչուն ներ չի կան հան, բայց ասանկ հանդրեճումս քիչ մը դժուար:

Աչքերս տափկներուն վրայ անկած կը հետեւիմ այդ զոյգիչ փէշերուն: Բովլաթ խոցերէն մէկուն մէջ կը սպրդի անձանօթուհիս եւ ես, բնականաբար, վտարով կը նետուիմ այդ գոնէն ներս: Ես դեռ անթին վրայ, աչքերը վեր կաննէ զիս գլխուր համար: Ա՛խ այդ նալումսքը, ծանօթ, բարեկամ նայուածք մը, բայց կը ճանչնամ դոյնս առաջին անգամ չէ եւ . . . ինքզինքիս կուգամ: Դեռ չի նստած անգամ մը աչքերս կը մերձեմ իր նայուածքին մէջ եւ գիտացնես կը ժպտի:

— Մարիթիթա՛, զո՞ւն ես կը հարցնեմ եւ ձեռքս կերկնցնեմ իրեն: Իր ձեռնոցապատ թափիկը արիւս մէջ գնելով՝

— Ես քեզ տեսածիս պէս ճանչցայ, բայց երբի մարդերը այնքան չուես կը մտնան . . . :

— Եւ կիններն ալ երթալով այնքան կաղւորնան, կը յուկուում եւ քովիկը կը կծկաւիմ:

— Ինչպէ՞ս ես, Երուանդ, կը հարցնեմ անգամ մըն ալ ձեռքը երկընցնելով ինծի:

Բամալուցին մէջ մենէ գտտ արիչ մարդ չիկար եւ շրթներուս ասնելով այդ աղւս որ թափիկը, քաղաքախաղան եւ սրբկեչս համբոյր մը կը գնեմ այդ gris - perle կաշիին վրայ:

— Ինչպէ՞ս եմ, չեմ գիտեր, բայց ասկէ ետքը ասելի լաւ պիտի

ըլլամ քանի որ նորէն կը գտնեմ զքեզ:

— Քառասունըութ ժամուան համար:

— Մի՛ ըսեր, Մարիէթթա:

— Հաւատա, վաղը չէ միւս օր կը մնկնինք նորէն Օտէսա, եւ ասոր համար երէկ զիշեր մնաք բարովի եկած էի էրկանս մէկ աղ-
գականին որ Օրթագեղ կը բնակի:

Հիմայ, քեզի ըսեմ թէ ով էր այս կնիկը: Ամբողջ ուսման մըն է,
աղէկ մտիկ ըրէ, պատուիրեց Երուանդ իր բարեկամին եւ նարկի-
լէին համար կրակ մը ապսպրելով սրճարանին մանչուն, սուղէս շա-
բուանակեց իր պատմութիւնը:

— Ես այս կնիկը դեռ քսան տարու աղջիկ եղած ժամանակէն
կը ճանչնայի: Աղեքսանդրեա եղած ժամանակս, մեր վերի յարկի
արարթըմանին մէջ կը բնակէր իր ծնողքին հետ որ չտորհքով յոյն
ընտանիք մըն էր: Այս ըսածս տասը տարի կայ: Այն ժամանակ հի-
մալուան չափ աղւ որ չէր, առանց սակայն աղեղ աղջիկ մը ըլլալու:

Մարմինը աւելի նիհար էր եւ անոր կլոր տեղուանքը դեռ իրենց
ամբողջ կանացի շնորհները չէին ստացած: Ն՛վլուսն, թեթեւոգի,
ցտակաստղ, ժպտուն սիրաբանող էակ մըն էր Մարիէթթա որ շատ
չէր յոգնեցնէր ինքզինքը, զէմը ելլող երկասարդին խելքը գլխէն
ստնելու համար: Տեսակ մը ժպտախառն նայուածք ունէր որուն
զերին կըլլայիր եթէ երբէք հաճէր այդ թակարդով քթէղ բռնել:

Այդ թակարդին ծայրէն կտիտած մնացի վեց ամիս շարունակ
եւ եթէ այսպէս տեսէր, ապա՞նվազէս կեանքս ամբողջ այդ վիճա-
կին մէջ պիտի մնայի եթէ, օրին մէկը Օտեսայէն մեծահարուստ Յոյ-
նի մը տղան չաանէր չի տանէր զբացնուհիս՝ սուրբլինիքու երկիրը:

Ուստի վաղեմի ծանօթներ էինք իրարու եւ շողինաւը դեռ Պէշիկ-
թաշ չեկած կարծես իմ նախկին Մարիէթթաս էր որուն հետ կը խօսէի:

Կորուած գանձի մը վերստացումը այնքան հաճոյք չպիտի
պատճառէր ինձի սրբան այս հանդիպումը, որ աւա՛ղ, շատ չէր կըր-
նար քչել: Մինչևս կամուրջ քաղուածքը ըրինք մեր երբեմնի սիրոյն:
Ինչ անուշ է վերջուշումը նախկին յարաբերութիւններու, երբ մա-
նուանդ զբացումներդ դեռ վառ կը մնան եւ զիմացինդ հիմա հազար
անգամ աւելի զեղեցկացած է քան երբեմն: Երբոր կնոջ մը համար
աղւոր է կրտսեմ, պիտես Երուանդ որ ձաշակս աժանի չեմ ծախեր,
ուստի Մարիէթթան այնքան աղւոր էր որչան մարդս կրնայ ինք-
զինքին մաղթել . . . առանկ համանի մը ունեւալու: համար:

Անխրեմ օգուեցե՛ք, բացատրութիւնը, մինակ մենաշնորհը չէ
liquidation ընող խանութներուն: Ամենէն շատ սիրոյ մէջ է որ առի-
թը փակցնելու չէ իրականութիւն տալու համար փափաքներուդ:

Հետեւաբար, առասօրէն complimentներ չսայլեցի իր աղւորութեան
մասին, յիշեցուցի իրեն մեր Աղեքսանդրից երբեմնի տեսութիւննե-
րը եւ ամբողջ բանաստեղծական աւելանս գրի նորէն թունդ հանելու:

համար այդ սիրաբ օր երբեմն ինձ համար բարտախոս էր: Քաջալերող՝ յուսաատու հով մը կար իր խօսուածքին մէջ եւ իր այս ընթացքէն սիրտ առած, ժամադրութիւն մը խնդրեցի իրմէ միւս օրուան համար:

— Գիտես, Մարէէթ թա, թէ որքան կը սիրէի զքեզ եւ անկէց ի վեր, կերպնում քեզի, ոչ մէկ կին չէ յաջորդած քեզի իմ սրտիս մէջ, դուն անոր թագուհին կը մնաս մինչեւ այսօր, հիմայ որ բազմազնորէն զմեզ գէժ առ գէժ կը գնէ, ապացուցէ որ երբեմնի սէրդ սուս չէր եւ վրաս այնքան վստահութիւն ունիս որքան ունէիր այն ատեն: Գես այն համբոյրներուն համը չըմհերուս վրայ է որ չէ կտրուած ուրիշ հպումներու ազդեցութեան տակ: Նորոգէ գանձնք անգամ մըն ալ, մանաւանդ որ հիմայ զգուշանալու պատճառներ չունիս, կարգուած ես եւ ազատ, բարի կամեցողութիւն մը բաւական է վարձարելու համար զգացումներս որոնք տասը տարիներէ ի վեր բան մը չեն կորսնցուցած իրենց թափէն, ընդհակառակը՝ առեկի բուռն կերպով կը չարչարեն զիս քու ներկայ գեղեցիութեանդ փթթումին ի տես: Չէ մ'ըսեր, հոգիս, եւ թող տուր որ անգամ մը եւս — եւ թերեւս վերջին անգամ ըլլալով — ցոյց տամ քեզի թէ որքան մեծ, որքան անեղբ է քեզ համար ունեցած պաշտամունքս:

Երկար չընեմ, երուանդ, ժամերով լեզու թափելէս ետքը, վերջապէս յաջողեցայ ժամադրութիւն մը խլել այդ բոսոր չըմհերէն:

— Բարեբաղդաբար ամուսինս հետս չէ: Կեսուրիս հետ Երուսոյէ վերադարձնուս հանգիպեցանք Պոլիս ուր հինգ օր կենալէ ետքը վաղը չէ միւս օր կը մեկնինք, ապա թէ ոչ կարելի չպիտի ըլլար ընդունիլ ժամադրութիւնդ որու կը հաւանիմ միայն եւ միայն քեզի հասկնելու համար թէ երբեմնի սէրս կեղծ չէր ինչպէս նաեւ հիմակուանը: Առաջին անգամն է որ պարտականութիւններէս կը չեղիմ, վստահ ըլլալով որ պատուաւոր մտրդու մը հետ զօրծ ունիմ որ զիսէ դնահատել այս տեսակ զոհողութեան մը բարձրութիւնը:

Այս խօսքերը հազիւ լսելի կըլլային ականջիս, այնքան բուռն էր ներսիդիս ազմուկը: Սիրտս զգայարանքներու ս միացած միաձայն կերպէին վաղուան հաճոյքին Հրաշափստը:

— Ուրեմն վաղը . . . բայց ո՞ւր:
Ականջն ի վար կը ծռիմ եւ կ'որոշեմ տեղը ուր պիտի դանէինք զիրար:

— Ժամը ութին:
— Այո՛ ճիշտ ութին:

Բաժնուած միջոցնուս այնպիսի կերպով սեղմեց ձեռքս որ վաղուան երանութեանս վրայ ալ կասկածիլ ներքի չէր եւ այդ հոգեկան վիճակս պատճառ եղաւ որ գիշերն ամբողջ աչքերս չի կրցայ գոցել:

(Շարունակելի)

Լ Ր Ա Ք Ա Ղ

ՄԵՐ ԱՅՆՆԵՐԷՆ

✱ Ինչպէս ամփրում իւն եղած է ամէն տարի, այս տարի ևս Հոխոխմեան կուսակցութեան օրը պարտական սիրուն հանդէս մը կատարուցաւ Հոխոխմեան վարժարանին մէջ: Ա. Էստուրջի մատարան մէջ օրուան Արբուհիներու յիշատակին նուիրուած եկեղեցական արարողութիւններէ և պատարագ մատուցելէ յետոյ՝ երկու բանոնայ և կանոնց ու օրիորդաց բաշխում իւնը զիկեցին Հոխոխմեան վարժարանը որտէ մեծ սրահը գործարուած էր օրուան սօնին վայել յարգութեամբ մը և ուր ամուսնիք՝ իրենց զուգընդունակ վարժուհեաց խումբը և Խնամակալուհի տիկիները և պճնուած իրենց տնտեսական արդարացողով՝ կ'ազատին հանդիսական բազմութեան որ գրեթէ ամբողջ սրահը զբաւեցաւ աշակերտուհիք ըսկան երգել զանազան երգեր և մէջ ընդ մէջ արատանկցին՝ արարագոյնի յարմար ճատեր և ստանալորներ: Ապա հանդիսականք աչքէ անցուցին աշակերտուհեաց ճեղագրմանը որ ի յոյս պրտած էին սրահին մէջ կողմը և և կէս օրէն մէկ ժամ առաջ մեկնեցան զո՛ր ապա օրումեան տակ:

✱ Վաղը Ս. Ստեփաննոս եկեղեցոյ մէջ կ'կատարուի Ս. Էջմիածնայ 1600 ամեակի տնտեսական և եկեղեցական հանդիսաւորութեամբ: Այս տոմար տաճարը պիտի զարդարուի մրտնիկի ստեղծով և տնտեսական օրերու յատուկ ջանաստանութեամբ, եկեղեցական արարողութեանց պիտի արուի հանդիսական շքեղութիւն մը և հանդիսաւոր պատարագ պիտի մատուցուի որտէ ներկայ պիտի գտնուի եղեր նաև Ս. Առաջնորդը: Եկեղեցական այս պատկառելի հանդէսին պիտի մասնակցին ոչ միայն երկուստ Հայ հասարակութիւնը, այլ և քաղաքի ամէն կարգի օտար հաստատութեանց մէջ գտնուող ազգայիններ, պատշաճապէս վառատրելու համար իրենց բրիտանական հասարակին և յուսուստութեան վառարանը եղող Ս. Էջմիածնի

հիմնարկութեան 1600 ամեակի սուրբ յիշատակը:

✱ Մեր համակրելի բարեկամ և աշխատակից Տիար Ռօբէրտ Սրբերեան, որ մի բանի ամէն ի վեր գործով Արմազ կ'ըլլանուէր՝ շարժուա մէջ վերադարձաւ Երմիր:

Գ.Ա.Ի.Ս.Փ.Ա.Կ.Ն.

✱ Տիարով թիբըն գաւառացի զրոյ մը Տիար Յակար Փափաջեան որ ծանօթ է Պօլսոյ լրագրութեան մէջ և որ խոստացած է մերմ իր աշխատակցութեան բամբինը բերել Թերմիս, հետեւողը կ'զրկ մեզ կրօնի դասը վերնագրին տակ:— «Հաւատա՛նք մեր կրօնական ժողովուրդը՝ հանգամանքին շատ անտարբեր գտնուած ենք կրօնքի մասին և անոր հոգեբանութեան անհիշարտաբեր կեցողութեան յարմար ենք: Կրօնական առողջ գաւառարկութեան համար երկու կողմեր խնդիրներ կան աչք և կրօնական դասընթացներ և կրօնասոյցներ: ցարդ չենք ունեցած կրօնագիտական ամբողջութեան և նպաստալոյսարար դասընթացը մը կ'ըլլան որ անկողմ անյարմար բանք եւս այս մասին մեծ պարտականութիւն կ'ընդունուի մեր եկեղեցականութեան այն մասին վրայ որ ոչ միայն արտապրելի ժամանակ այլ նաև մարի ու սրտի պատրաստականութիւն ունի՝ արտապրելու համար կրօնագիտական կատարելագոյն դասընթացներ: Գաղով կրօնասոյցներուն՝ անհրաժեշտ է աշխարհական ուսուցիչներուն ձեռքէն ստանել կրօնքի դասավանդութիւնը և ջանքնել եկեղեցականներուն սրտք կրօնքի ուխտին նուիրուած ըլլալով՝ շատ անհիշարտաճանկեղ պիտի ըմբռնեն կրօնքի բարոյական և հոգեկան բարձր նշանակութեան մասնակցի որ կրօնագիտական դասավանդութեանց մասին հասարակութիւնը անհիշարտաճանկեղ ունի եկեղեցականներու վրայ, մինչդեռ աշխարհական վարժարանը միշտ անհաստատութեան մը խորհրդանշան է ժողովուրդի աչքին ու:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՆԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ՇԱՀՆՈՒՐԻ ԲԱՐԵԿԱՍԸ

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

ԳՐ. ՄԱԼԻԱՍ

Յ. ԱԼՓԻԱՐ

ՍԻՊԻԼԵ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՄԱՐՕ

Ա. Մ. Ն.

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կ'ինդրուի մեր Մեծ, Բաժանորդներն, — սրանց գտնուած բաղարը
թերթիս զարձակող չունինք, — որ փախձան մեզի հասցնել իրենց պարտքը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ — ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵԶԻՄԲԻՋ

ԳՈՐԾ

Գ. Մ. ԲՈՐԻՍՄԱՆԵԱՆ

Գին թղթակազմ 15 — յարթ ձեռակազմ 20 — ցրտի շ.

Վեդրանտանցի	Իզմիր:	Մամուրեան գրատուն
	Կիրասան	Հեղինակին մաս
	Տրապիզոն	Խնչիկ Չոլագեանի մաս
	Կ. Պոլիս	Չոլագեանի փափազանի մաս Պոլսի Հասոյ
	Թիֆլիզ	Գալուստ Գեղամեանի գրք փաճառ սնուցր.

ՊԱՅՄԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Մամուլի բաժանորդագրութիւնք միայն տարեկան են: Կորուած թեւ թեր վերստանալ փափաքող բաժանորդք պէտք է որ անոնց զինք վճարեն: Չնրատարակուած յօդուածք ետ չեն վերադարձուիր, եւ առանց բացառութեան միշտ անպատասխանի կ'մնայ այս առթիւ խնդրուած ո եւ է բացատրութիւն: Կ'ընդունուին նաեւ ծանուցումներ խիստ չափաւոր զիններով:

Ա. Մամուլ ձեռքէ կ'ծախուի Պօլիս եւ Կեղրոնատեղին է ՄԵԾ. ՆՇԱՆ ԷՖ. ԹԶԱՆԵԱՆ Պահել: Գարու ք 59, կ'գտնուի նաեւ ինչպէս Բերաի նոյնպէս եւ բոլոր լրագրավաճառներու եւ ծխավաճառներու խանութները հասր 40 փարաի:

Թուրքիոյ հաւնար սարեկան	50	դրուշ
Արսասահեանի » »	12	ֆրանկ
Ռուսաստանի » »	5	րուպլի
ՀԱՏԸ 40 Փարսա		

Բաժանորդագրուիլ փափաքողք կրնան զիմել ուղղակի Խմբագրութեան
և կամ Թերթիս Գործակալներուն:

Հասցէ՝

م. ماموريان مخدومی — از مير

« آروليان مامول » غزته سی صاحب امتياز ومدير مسئولی

Ս. ՄԱՄՈՒՐԵԱՆ ՈՐԴԻ

ԽՄԲԱԳՐՈՒ - ՏՆՕՐԵՆ

« ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ »

Շարածածերթի

Իզմիր

M. MAMOURIAN FILS

RÉDCTEUR - PROPRIÉTIÉRE

de la Revue Hebdomadaire

« AREVELIAN MAMOUL »

Smyrne

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՕՐԱԹԵՐԹ ԱՌԱԻՑՏԵԱՆ

Բ. Դրան մեծ պողոտան թիւ 20

4. ՊՕԼԻՍ

ՏԻՐ 4 ՏՆՕՐԵՆ

Տ. ՃԻՂԵԼԵԿԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Քաղաքական եւ Ազգային Տեսութիւններ, Լուրեր, Թղթակցութիւններ, Գիտական եւ Արուեստական յօդուածներ, Թերթօն եւն. եւն. .

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Դաւաններու հաւնար սարեկան	100	դր. վեցամսեայ	50
Պօլսոյ » »	75	» »	40
Արսասահեանի » »	22	ֆր. »	11

Չեղիկ կը ծախուի հասր **10** փարսալի: